

երկնքի տակ, և որքան էլ այդ երջանկութիւնը լուսաճաճանչ լի-
նի, վենեցիան էլի կ'ոսկեղօժէ նրան իր անթառամ փայլով:

Գօնդօլը, որի մէջ նստած էին ինսարօվը և Ելենան, հան-
դարտիկ անցաւ Riva dei Jehiavoni, դօժերի պալատի, Պիա-
ցետտայի մօտով, և մօտա Մեծ Զրանքը: Երկու կողմից շա-
րան ընկան մարմարեայ պալատները, սրանք, կարծես, հան-
դարտ լողում էին մօտով, հազիւ թոյլ տալով հայեալքին զրկել
և հասկանալ իրանց բոլոր գեղեցկութիւնները: Ելենան զգում
էր իրան խորապէս երջանիկ, նրա երկնքի կապուտակութեան
մէջ մի մութ ամպիկ կար, այն էլ հեռանում էր. ինսարօվը
այդ օրը անհամեմատ լաւ էր զգում իրան նրանք հասան Բի-
ալտօի դէք կամարին և յետ դարձան: Ելենան վախենում
էր որ եկեղեցիների ցրտութիւնը ինսարօվի համար վատ կը
լինի, բայց նա յիշեց delle Belle Arti ակադեմիան և հրամայեց
գօնդօլալարին դնալ այնտեղ: Նրանք շուտով պտտեցին այդ
փոքրիկ մուգէի բոլոր դահլիճները: Չը լինելով ոչ զիտցողներ,
ոչ սիրողներ, նրանք այժմ կանգ չէին առնում իւրաքանչիւր
պատկերի առաջ, չէին բռնադատում իրանց, մի ինչ որ փայլուն
ուրախութիւն անակնկալ կերպով եկաւ նրանց վրայ: Նրանց
յանկարծ ամեն ինչ թուաց զուարճալի (երեխաներին լաւ յայտ-
նի է այս զգացմունքը), ի մեծ ապշութիւն երեք այցելու անդ-
լիացիների, Ելենան արտասուելու չափ քրքչում էր Տինտօրե-
տօյի սուրբ Մարկոսի վրայ, որ ցատկում է երկնքից ինչպէս գորտը
ջրի մէջ, կեղեքուող ստրուկին ազատելու համար, իր կողմից ին-
սարօվը հրճուանք զգաց, տեսնելով կանաչ քղամիտ հագած այն
եռանդոտ մարդու մէջքն ու սրունքները, որ կանգնած է Տի-
ցիանի Համբարձում պատկերի առաջին պլանում և բարձրաց-
նում է ձեռքերը Աստուածամօրից յետոյ, բայց ինքը Աստուա-
ծամայրը—մի գեղեցիկ, ուժեղ կին, որ հանդարտ և վեհ կեր-
պով սլանում է դէպի Հօր Աստուծու գիրկը—ապշեցրեց թէ
ինսարօվին և թէ Ելենային, դուր եկաւ նրանց նոյնպէս և ծերու-
նի Չիմա դա-Կօնեղեանօի խիստ և սուրբ պատկերը: Դուրս գա-
լով ակադեմիայից, նրանք մի անգամ էլ նայեցին իրանց յետե-
ւից եկող անգլիացիներին, որոնք նապաստակի երկաթ ատամ-
ներ և կախ ընկած բակենբարդեր ունէին—և ծիծաղեցին. տե-
սան իրանց գօնդօլալարին իր պոչատ բաճկոնով և կարծիկ
վարդիկով—և ծիծաղեցին. տեսան մանրափաճառ կնոջը, որ
սպիտակ մազերի մի կապոց ունէր գլխի զազաթի ծայրին—և
աւելի թունդ ծիծաղեցին. վերջապէս միմեանց դէմքի նայեցին
և ծիծաղից թուլացան, իսկ հէնց որ նստեցին գօնդօլի մէջ—
պինդ և պինդ սեղմեցին իրար ձեռքերը:

Նրանք գնացին հիւրանոցը, վազեցին իրանց սենեակը և հրամայեցին որ ճաշ բերեն իրանց համար: Ուրախութիւնը չէր թողնում նրանց և ճաշի վրայ: Նրանք միմեանց միծարում էին, խմում էին Մոսկուայի բարեկամների կենացը, ծափահարում էին ծառային համեղ ձկան համար, և շարունակ պահանջում էին նրանից կենդանի frutti di mare! Մտաւն ուսերը վեր էր քաշում և ոտներով քստացնում, իսկ նրանց սենեակից դուրս գալիս շարժում էր գլուխը և մի անգամ նոյն իսկ հառաչելով շնջաց. poveretti! (խեղճեր): Ճաշից յետոյ նրանք գնացին թատրոն:

Թատրոնում տալիս էին Վերդիի՝ արդարն ասուած, բաւական ցած, բայց եւրոպական բոլոր բեմերում ընդունուած և մեղ, ուռններին, լաւ յայտնի «Տրավիատա» օպերան: Սեղօնը Վենեցիայում անցել էր, և բոլոր երգիչները միջակութեան մակերևոյթից չէին բարձրանում: ամեն մէկը բղաւում էր, որքան ոյժ ունէր: Վիօլետտայի դերը կատարում էր մի արտիստուհի, որ համարում չուներ, բայց շնորհքից դուրկ չէր: Դա մի երիտասարդ, ոչ շատ գեղեցիկ, սեռչեայ աղջիկ էր ոչ բոլորովին հաւասար և արդէն ջարդուած ձայնով: Նա հագնուած էր միամտութեան չափ խայտաբղէտ և վատ. կարմիր ցանցը ծածկում էր նրա մազերը, քոյնը գնացած, կապոյտ ատլասից կարած հագուստը ճնշում էր նրա կուրծքը, շվեդական հաստ ձեռնոցները համոռւմ էին սուր արմունկներին, և ինչպէս կարող էր նա, որ և է բերգամայի հովուի մի աղջիկը, իմանալ թէ ինչպէս են հագնուում Պարիզի կամեիլիաները: Բեմի վրայ պահուել էլ չէր իմանում նա. բայց նրա խաղի մէջ շատ կար ճշմարտութիւն և անարուեստ պարզութիւն, և երգում էր նա արտայայտութեան և բիթմի այն առանձին կրքոտութեամբ, որ աջողում է միայն իտալացիներին: Ելննան և ինսարովը նստած էին երկուսով մութ օթեակում, բոլորովին մօտ բեմին. ոգու ուրախ տրամադրութիւնը, որ իջել էր նրանց վրայ delle Belle Arti ակադեմիայում, դեռ չէր անցել: Երբ հրապուրող կնոջ ցանցերն ընկած դժբախտ պատանու հայրը երեսաց բեմի վրայ իր Ֆրակով և սպիտակ, ցցուած կեղծ մազերով, արձակեց վհատեցուցիչ բառային օրհնօրհն, նրանք երկուսով քիչ էր մնում փրտկացնէին: Բայց Վիօլետտայի խաղը աղդեց նրանց վրայ:

— Այս խեղճ աղջկան համարեա բոլորովին չեն ծափահարում, ասաց Ելննան, — իսկ ես հազար անգամ նախապատիւ եմ համարում նրան մի որևիցէ ինքնավստահ, երկրորդական հրուշակի տէր դերասանուհուց, որ կը կոտրատուէր և կը գալարուէր,

ամբողջ ժամանակ էֆֆէկտի յետևից վաղելով: Այս մէկը կարծես հանաքներ անելու արամադրութիւն չունի. տես, նա չէ նկատում թէ հասարակութիւն կայ:

Ինսարովը օթևակի ծայրին ընկաւ և ուշադրութեամբ նայեց Վիօլետտային:

— Այո, արտասանեց նա, — նա հանաք չէ անում. մահուան հոտ է գալիս:

Ելենան լռեց:

Սկսուեց երբորդ գործողութիւնը, Վարագայրը բարձրացաւ... Ելենան ցնցուեց տեսնելով այդ անկողինը, այդ կախ գցած վարագոյրները, դեղերով լի սրուակները, կիսով չափ հանգած լամպան... Նա յիշեց մօտիկ անցեալը... Ճիսկ ապագան, իսկ ներկան, այս հարցերը անցան նրա գլխով: Կարծես գիտմամբ, դերասանուհու կեղծ հաղին իբրև պատասխան օթևակում լսուեց ինսարովի խուլ, չը կեղծուած հազը... Ելենան գաղտուկ նայեց նրան և իսկոյն տուեց իր գծերին անշիփթ և հանգիստ արտայայտութիւն. ինսարովը նրան հասկացաւ, և ինքն էլ սկսեց ժպտալ և շատ ցած ձայնով մասնակցել երգեցողութեան:

Բայց նա չուտով լռեց: Վիօլետտայի խաղը զնալով լաւ, ազատ էր դառնում: Նա դէն գցեց ամեն ինչ, որ կողմնակի էր, անհարկաւոր էր և զտաւ իրան. հաջուադիւտ, բարձրագոյն բախտ գեղարուեստագէտի համար: Նա յանկարծ անցաւ այն գծից, որը որոշել անկարելի է, բայց որի յետևում ապրում է գեղեցկութիւնը: Հասարակութիւնը ցնցուեց, զարմացաւ: Զարդուած ձայնով տգեղ աղջիկը նրան սկսում էր իր ձեռքի մէջ առնել, տիրել նրան: Բայց և երգչուհու ձայնն էլ ջարդուածի պէս չէր հնչում, այլ տաքացաւ և սնդագացաւ: Երևաց «Ալֆրէդօն», Վիօլետտայի ուրախական աղաղակը քիչ էր մնում բարձրացնէ այն փոթորիկը, որի անունն է fanatismo և որի առջև ոչինչ են մեր հիւսիսային ոռնոյները: Մի ակնթարթ ևս — և հասարակութիւնը դարձեալ լռեց, անշարժացաւ: Սկսուեց դուէտը, օպերայի ամենալաւ կտորը, որի մէջ կօմպօզիտօրին աջողուել է արտայայտել անխելքաբար վատնած երիտասարդութեան բոլոր ափսոսանքները, կատաղի և անկարող սիրոյ վերջին կոճիւր: Ողեսորուած ընդհանուր համակրութեան չունջով, գեղարուեստագէտի ուրախութեան արտասուէքները և իսկական տանջանքը աչքերին, երգչուհին անձնատուր եղաւ իրան բարձրացնող ալիքին, նրա դէմքը կերպարանափոխուեց, և յանկարծակի մօտեցող մահուան ահաւոր ուրուականի առաջ աղաչանքի մի այնպիսի, մինչև երկինք հասնող ուժգնութեամբ նրա

բերանից դուրս թափուկացան „Lascia mi vivere... morir ti giovane“ (տուր ինձ ապրել... մեռնել այսպէս ջահիլ), որ ամբողջ թատրոնը զղրդաց կատաղի ծափահարութիւններից և ոգևորական ազդակներից:

Ելնանան ամբողջովին ցրտացաւ Նա սկսեց հանդարտ որոնել իր ձեռքով ինսարօլի ձեռքը, գտաւ նրան և պինդ սեղմեց: Ինսարօլը պատասխանեց նրա սեղմումին. բայց ոչ Ելնանան նայեց ինսարօլին, ոչ ինսարօլը Ելնային: Այս սեղմումը նման չէր այն սեղմումին, որով նրանք, մի քանի ժամ առաջ, միմեանց ողջունում էին գօնդօլում:

Նրանք նաւարկեցին գէպի իրանց հիւանդանոցը դարձեալ Canal Grande-ի վրայով: Գիշերը արդէն վրայ էր հասել, լուսաւոր, փափուկ գիշերը: Նոյն պալատները շարէ շար եկան նրանց առջև, բայց այժմ ուրիշ տեսակ էին թւում: Նրանցից այնպիսիները, որոնց լուսաւորում էր լուսինը, ոսկեգոյն սպիտակութիւն էին տալիս և այդպիսի սպիտակութեան մէջ կարծես կորչում էին մանրամասնութիւնները և պատուհանների եւ պատշգամբների գծագրութիւնները. դրանք աւելի պարզ երեւում էին այն շինութիւնների վրայ, որոնք ծածկուած էին հասարակ ստուերի թեթեւ մթութեամբ: Գօնդօլները իրանց փռքերի կարմիր կրակներով, կարծես, էլ աւելի անլսելի և արագ էին վազում. խորհրդաւոր կերպով փայլում էին նրանց պտղուած զուկները, խորհրդաւոր կերպով բարձրանում և ցած էին ընկնում թիւերը վրդովուած ջրի արծաթէ ծփանքների վրայ. այստեղ, այնտեղ, կարճ և ոչ բարձր ձայնով բացականչում էին գօնդօլավարները (նրանք այժմ երբէք չեն երգում). ուրիշ ձայներ համարեալ չէին լսում: Հիւրանոցը, ուր ապրում էին ինսարօլը և Ելնան, գտնւում էր Riva dei Schiavoni-ի վրայ. չր համեմելով նրան, նրանք դուրս եկան գօնդօլից և մի քանի անգամ պտտեցին սուրբ Մարկոսի հրապարակի շուրջը, կամարների տակ, ուր մանրիկ սրճարանների առաջ խմբւում էր շատ պարապ ժողովուրդ: Ման գալ սիրած էակի հետ օտար քաղաքում, օտարների մէջ, մի առանձին ախորժելի բան է. ամեն ինչ թւում է գեղեցիկ և նշանաւոր, ամենքին ցանկանում ես բարիք, խաղաղութիւն և նոյն այն երջանկութիւնը, որով լըցւած ես ինքզիւ Բայց Ելնանն այլ ևս չէր կարողանում անհոգութեամբ անձնատուր լինել իր երջանկութեան զգացմունքին. նրա սիրտը, որ ցնցուել էր օրուայ տպաւորութիւններից, չէր կարողանում հանգստանալ, իսկ ինսարօլը, անցնելով դօժերի պալատի մօտով, լուռ կերպով ցոյց տուեց աւստրիական թընդանօթների բերանները, որոնք նայում էին ստորին կամարների

տակից, և զլիարկը քաշեց յօնքերի վրայ: Միննոյն ժամանակ նա իրան զգում էր յոգնած, — և վերջին անգամ նայելով ու Մարկոսի եկեղեցուն, նրա գմբէթներին, ուր լուսնի ճառագայթների տակ կապտագոյն կապարի վրայ վառւում էին ֆօսֆօրական լոյսի բծերը, նրանք դանդաղ կերպով տուն վերադարձան:

Նրանց սենեակի պատուհանները նայում էին այն լայն ծովային անյգին, որ տարածւում է Riva dei Schiavoni-ից մինչև Զիուգիկկա: Համարեա նրանց հիւրանոցի զիմաց բարձրանում էր ու Գէորգի սրածայր աշտարակը. աջ կողմում, բարձր, օդի մէջ, փայլում էր Դօդանի ոսկէ գունդը — և պըճընում, իբրև հարս կանգնած էր գեղեցկագոյնը եկեղեցիներից, Գալլադին Reotentore-ը. ձախ կողմում սկին էին տալիս նաւերի կայմերը, չոգեֆաւերի ծխնելոյգները. այս և այն կողմերում կախուած էր, ինչպէս մեծ թիւ, կիսով չափ ծալուած առագաստը և դրօշակները հաղիւ էին շարժւում: Ինսարօյը նստեց պատուհանի առաջ, բայց Ելենան թող չը տուեց նրան երկար զուարճանալ տեսարանով. յանկարծ Ինսարօյի մէջ երևաց տաքութիւն, նրան գրկեց մի տեսակ լափող թուլութիւն: Ելենան պակեցրեց նրան անկողնում և սպասելով մինչև որ նա քնեց, հանդարտ կերպով վերադարձաւ պատուհանի մօտ: Օ՛, ինչպէս հանդարտ և փաղաքշական էր գիշերը, որպիսի աղունակային հեղութեամբ էր շնչում կապտագոյն օդը, ինչպէս ամեն մի տանջանք, ամեն մի վիշտ պիտի լռէր և քնէր այս պարզ երկրի տակ, այս սուրբ, անմեղ ճառագայթների տակ: «Օ՛, Աստուած, մտածում էր Ելենան, ինչո՞ւ է մահը, ինչո՞ւ անջատում, հիւանդութիւն և արտասուներ. կամ ինչո՞ւ է այս գեղեցկութիւնը, յոյսի այս քաղցր զգացմունքը, ինչո՞ւ է հաստատուն ապաստանի, անփոփոխ պաշտպանութեան, անմահ հովանաւորութեան այս հանգստացնող գիտակցութիւնը: Էլ ի՞նչ է նշանակում այս ժպտուն, օրհնող երկիրը, այս երջանիկ, հանգստացող երկիրը. միթէ այս բոլորը միայն մեր մէջ է. իսկ մեղանից դուրս յաւիտենական յուրտ և լռութիւն է: Միթէ մենք մենակ ենք... մենակ... Իսկ այնտեղ, ամեն կողմում, այդ բոլոր անհասանելի անդունդների և բարութիւնների մէջ — ամեն ինչ, ամեն ինչ խորթ է մեզ: Եթէ այդպէս է, էլ ինչացո՞ւ է աղօթքի այդ ծառաւը և ուրախութիւնը („Morir si giovane“, հնչեց նրա հոգու մէջ)... Միթէ չէ կարելի աղաչել, հեռացնել, փրկել... Ո՛վ Աստուած, միթէ չէ կարելի հաւատալ հրաշքին: Ելենան գլուխը դրեց սեղմած ձեռքերի վրայ: «Բաւական է» չնշմաց նա: «Միթէ արդէն բաւական է: Ես երջանիկ էի, ոչ միայն բոլորներ,

ոչ ժամեր, ոչ ամբողջ օրեր, — ամբողջ շաբաթներ միմեանց յետևից: Բայց ինչ իրաւունքով: Նա սկսեց սարսափել իր երջանկութիւնից: Իսկ եթէ նա չէ կարելի, մտածեց նա, եթէ այս բանը ձրի չէ տրուած ՁԲ որ դա երկինք էր... Իսկ մենք մարդիկ ենք, խեղճ, մեղաւոր մարդիկ... *Mourir di giovane...* Օ՛ր, մութ ուրուական, հեռացիր: Միայն ինձ չէ հարկաւոր նրա կենանքը:

«Բայց եթէ սա պատիժ է, մտածեց նա նորից, եթէ մենք պարտաւոր ենք այժմ լիապէս վճար հատուցանել մեր մեղքի համար: Իմ խիղճը լռած էր, նա այժմ լուռ է: Բայց միթէ դա անմեղութեան ապացոյց է: Օ՛հ, Աստուած, միթէ մենք այդքան յանցաւոր ենք: Միթէ Դու, որ ստեղծել ես այս գիշերը, այս երկինքը, կը կռամնաս պատժել մեզ այն պատճառով, որ մենք սիրում էինք: Իսկ եթէ այդպէս է, եթէ նա մեղաւոր է, եթէ ես մեղաւոր եմ, — աւելացրեց նա մի ականաւոր ուժգնութեամբ, — տուր նրան, ով Աստուած, տուր մեզ երկուսին մեռնել գոնէ ազնիւ, փառաւոր մահով — այնտեղ, նրա հայրենի դաշտերում, և ոչ թէ լայտեղ, ոչ այս խուլ սենեակում»:

«Իսկ մենակ, խեղճ մօր վիշտը» հարցրեց նա իրան և շփոթուեց, և պատասխաններ չը գտաւ իր հարցի դէմ: Ելնանան չը գիտէր, որ իւրաքանչիւր մարդու բախտաւորութիւնը հիմնուած է ուրիշի դժբախտութեան վրայ, որ նոյն իսկ նրա օգուտը և յարմարութիւնը պահանջում են, ինչպէս արձանը՝ պատուանդան, ուրիշների վնասը և անյարմարութիւնները:

«Բենդիչ», քնի մէջ թոթովեց Ինսարովը:

Ելնանան ոտների մատների վրայ մօտեցաւ նրան, խոնարհուեց նրա վրայ և սրբեց քրտինքը նրա դէմքից: Ինսարովը բարձի վրայ մի քիչ դէս ու դէն ընկաւ և հանդարտուեց:

Իսկ նա նորից մօտեցաւ պատուհանին և նորից մտածութիւնները վերցրին նրան: Նա սկսեց ինքն իրան խրատել և հաւատադնել թէ վախելու պատճառ չը կայ: Նա մինչև իսկ ամաչեց իր թուլութիւնից: «Միթէ վտանգ կայ, միթէ նա այժմ լաւ չէ, շնչաց նա: ՁԲ որ եթէ մենք այսօր թատրոնում չը լինէինք, այս մաքերը իմ գլուխը չէին գայ»: Այդ ակնթարթում նա ջրից բարձր մի սպիտակ որոր տեսաւ, նրան, երևի, վախեցրել էր ձկնորսը և նա թռչում էր լուռ, անհաւասար թռիչքով, կարծես տնդելով, թէ ուր կարելի է ցած իջնել: «Ահա եթէ նա թռչէ այս կողմը, մտածեց Ելնանան, — դա կը լինի լաւ նշան... Որորը տեղն ու տեղը պտոյտներ արաւ, թեկերը դարսեց և նետահարի նման, մի խղճալի ձայն արձակելով ընկաւ մի ինչ-որ հեռու տեղ, մութ նաւի յետեր, Ելնանան ցնցուեց, բայց

յետոյ ամաչեց, որ ցնցուեց. և նա, շորերը չը հանելով, պառկեց անկողնում ինսարովի մօտ, որ չնչում էր ծանր և յաճախ

XXXIV

Ինսարովը ուշ զարթնեց մի խուլ ցաւով զլսի մէջ, ամբողջ մարմնի, ինչպէս նա էր ասում, անձոռնի թուլութեան զգացմունքով։ Սակայն նա վեր կացաւ։

— Բենդիչը չեկաւ, այս եղաւ նրա ատաղին հարցը.

— Դեռ ոչ, պատասխանեց Ելենան և տուեց նրան Osservatore Triestino լրագրի վերջին համարը, ուր շատ էր խօսուում պատերազմի մասին. սլաւօնական երկիրների, իշխանութիւնների մասին։ Ինսարովը սկսեց կարդալ, իսկ Ելենան նրա համար սուրճ էր պատրաստում... Մէկը բաղխեց դուռը։

«Բենդիչը», մտածեցին երկուսը, բայց ձեռողը ասաց ուսերէն. «կարելի է մտնել»։ Ելենան և Ինսարովը զարմացած իրար նայեցին և, չը սպասելով նրանց պատասխանին, սենեակը մտաւ մի շատ լաւ հագնուած մարդ, փոքրիկ, սուր գէմքով և աշխոյժ մանր աչքերով, նա ամբողջովին փայլում էր, կարծես թէ նոր է տարել ահագին փողեր կամ լսել է ամենաախորժելի մի նորութիւն։

Ինսարովը աթոռից բարձրացաւ։

— Դուք ինձ չէք ճանաչի, ասաց անձանօթը, արձակ-համարձակ մօտենալով նրան և սիրալիր ողջոյն տալով Ելենային։

— Լուսօտարով, յիշում էք, մենք Մօսկուայում հանդիպեցինք իրար Ե...-ի մօտ։

— Այո, Ե...-ի մօտ, արտասանեց Ինսարովը։

— Ինչպէս չէ, ինչպէս չէ, իմըրում եմ ձեզ ներկայացնել ինձ ձեր ամուսնուն։ Տիկին, ես միշտ խորապէս յարգում էի Դմիտրի Վասիլևիչին... (նա ուղղեց) Նիկանօր Վասիլևիչին և շատ երջանիկ եմ, որ վերջապէս պատիւ ունիմ ձեզ հետ ծանօթանալու։ Երևակայեցէք, շարունակեց նա, զիմելով Ինսարովին, — ես միայն երէկ երեկոյեան իմացայ, որ դուք այստեղ էք։ Ես նոյնպէս այս հիւրանոցում եմ ապրում։ Ի՞նչ քաղաք է սա, այս վեներցիան — բանաստեղծութիւն, և ուրիշ ոչինչ։ Մի բան միայն սարսափելի է. անթաժ աւատրիացիները իւրաքանչիւր քայլում — ախ, այս աւատրիացիները, ի դէպ, լսել էք, Դունայի վրայ վճռական պատերազմ է տեղի ունեցել, 300 թիւրք օֆիցերներ են սպանուել, Սիլիստրիան վերցրած է, Սերբիան արդէն իրան անկախ է հրատարակել։ Դուք իբրի հայրենասէր, հրճուանքի մէջ պիտի լինէք այնպէս չէ, իմ մէջ էլ սլաւօնական արիւնը

եռում ու եռում: Բայց ես խորհուրդ եմ տալիս ձեզ զգոյշ լինել, ես համոզուած եմ, որ ձեզ հետեւում են: Լրտեսութիւնը այստեղ սարսափելի է: Նրէկ մօտենում է ինձ մի ինչ—որ կասկածելի մարդ հարցնում է՝ ուս եմ ես արդեօք: Ես նրան ասացի թէ Դանիացի եմ... Բայց դուք պէտք է որ տկար լինէք, ամենասիրելի Նիկանօր Վասիլեօվիչ: Դուք պէտք է բժշկուէք, տիկին, դուք պէտք է բժշկէք ձեր ամուսնուն: Ես երէկ, խելագարի պէս, վազում էի պալատները և եկեղեցիները—դուք հօ եղել էք դօժերի պալատում: Ի՞նչ հարստութիւն ամեն տեղ: Մանաւանդ այդ մեծ դահլիճը և Մարինօ Ֆալկերօի տեղը, այնպէս էլ կանգնած է, decapitati pro criminibus. Ես եղայ և հռչակաւոր բանտերի մէջ, ահա ուր իմ հոգին վրդովուեց—ես, գուցէ դուք յիշում էք—միշտ սիրում էի զբաղուել սօցիալական հարցերով և արխատօկրատիայի դէմ էի—ահա ուր կը տանէի ես արխատօկրատիայի պաշտպաններին,—այդ բանտերը. ճիշտ է ասել Բայրօնը. «I stood in venice on the bridge of sighs», սակայն նա էլ արխատօկրատ էր: Ես միշտ առաջադիմութեան կողմն էի: Երիտասարդ սերունդը ամբողջովին առաջադիմութեան կողմն է: Իսկ ինչպէս են անգլո—ֆրանսիացիները: Տեսնենք, շատ բան կանեն նրանք, Բուստրապան և Գօլմերստօնը: Գիտէք դուք, Գօլմերստօնը առաջին մինիստր է դարձել: Ոչ, ինչ էլ ասէք, ռուսական բռունցքը հանաք չէ: Սարսափելի խաբեայ է այդ Բուստրապան: Ուզում էք, ես ձեզ կը տամ les Châtiments de Victor Hugo—զարմանալի է: L'avenir le gendarme de Dieu—մի քիչ համարձակ է ասուած, բայց ոյժ, ոյժ: Լաւ է նոյնպէս ասել իշխան Վեազեմսկին, «Եւրոպան կրկնում է Բաշ-Կադիկլար, աչք չը վերցնելով Սինօպից»: Ես սիրում եմ բանաստեղծութիւնը: Ինձ մօտ կայ նոյնպէս և Գրատօնի վերջին գրքովը, ինձ մօտ ամեն բան կայ: Չը գիտեմ ինչպէս դուք, բայց ես շատ ուրախ եմ որ պատերազմ կայ. միայն թէ չը պահանջէին տուն վերադառնալ, ես այստեղից պատրաստուում եմ Ֆլօրինցիա, Հռոմ գնալ: Ֆրանսիա գնալ չէ կարելի, ուստի մտածում եմ Սպանիա գնալ—կանայք այնտեղ, ասում են, զարմանալի են, բայց աղքատութիւն է, և միջատներ շատ կան: Կը գնայի և Կալիֆօրնիա, մեզ ռուսներին համար ամեն ինչ մեծ բան չէ, բայց ես մի խմբագրի խօսք եմ տուել ուսումնասիրել մանրամասնաբար վաճառականութեան հարցը Միջերկրական ծովում: Դուք կասէք թէ անհետաքրքրական առարկայ է, մասնագիտական է, բայց մեզ հարկաւոր են, հարկաւոր են մասնագէտներ, բաւական է որքան փիլիսոփայութիւններ արինք, այժմ հարկաւոր է գործնականը, գործնականը... Բայց դուք շատ տկար էք, Նիկա-

նոր վառիկովիչ, ևս ձեզ գուցէ, յոգնեցնում եմ, բայց միևնոյն է, ես քիչ էլ կը նստեմ...

Եւ երկար այսպէս չրթչրթում էր Լուսոհարովը, և հեռա-
նալով, խոստացաւ էլի գալ:

Անսպասելի այցելութիւնից տանջուած՝ Ինսարովը պառ-
կեց բազմոցի վրայ:—Ահա, դառնութեամբ ասաց նա, նայելով
Ելենային,—ահա ձեր երիտասարդ սերունդը: Մի ուրիշը աւելի
վեհ է պահում իրան, ինքն իրան ցոյց է տալիս, բայց հոգով
նոյն կաշաղախն է, ինչպէս այս պարոնը:

Ելենան չը պատասխանեց իր ամուսնուն. այդ վայրկեա-
նին նրան աւելի շատ անհանգստացնում էր Ինսարովի թուլու-
թիւնը, քան Ռուսաստանի ամբողջ երիտասարդ սերունդի դուր-
թիւնը... Նա նստեց նրա մօտ, վերցրեց ձեռագործը: Ինսարովը
փակեց աչքերը և ընկած էր անշարժ. ամբողջապէս գունատ և
ցուրտ: Ելենան նայեց նրա խիստ զծագրուած կիսադէմքին, նրա
ձգուած ձեռքերին և յանկարծակի երկիւղը ճմլեց նրա սիրտը:

—Դմիտրի... սկսեց նա:

Ինսարովը վեր թռաւ:—Ի՞նչ է. Բենդիչը եկաւ:

—Դեռ ոչ... Բայց ինչ ևս կարծում—դու տաքութիւն
ունիս, դու ճիշտ որ, ամբողջ չես, չուղարկինք արդեօք բժշկի
յետեից:

—Քեզ վախացրել է այդ շատախօսը: Հարկաւոր չէ: Քիչ
կը հանգստանամ և ամեն ինչ կանցնէ: Ծաշից յետոյ մենք էլի
կը գնանք... Մի որ և է տեղ:

Անցաւ երկու ժամ... Ինսարովը դեռ պառկած էր բազ-
մոցի վրայ, բայց քնել չէր կարողանում, թէև աչքերը չէր բաց
անում: Ելենան նրա մօտից չէր հեռանում: Նա վայր գցեց ձե-
ռագործը ծնկների վրայ և չէր շարժւում:

—Ինչո՞ւ չես քնում, հարցրեց նա վերջապէս:

—Այ մի քիչ սպասիր,—Ինսարովը վերցրեց Ելենայի ձեռքը
և դրեց իր գլխի տակ:—Այ այսպէս... Լաւ է: Չարթեցրու ինձ
իսկոյն, հէնց որ կը գայ Բենդիչը: Եթէ նա կասէ թէ նաւը
պատրաստ է, մենք նոյն ժամին կը ճանապարհուենք... Պէտք է
իրերը պնդացնել:

—Պնդացնելը երկար չի քաշի, պատասխանեց Ելենան:

—Ի՞նչ էր այդ մարդը դուրս տալիս պատերազմի, Սեր-
բիայի մասին, խօսեց քիչ յետոյ, Ինսարովը:—Երևի իրանից էր
հնարում: Բայց պէտք է, պէտք է գնալ: Ժամանակ կորցնել չէ
կարելի: Պատրաստ եղիր:

Նա քնեց և սենեակում ամեն ինչ հանդարտուեց:

Ելենան գլուխը թեքեց դէպի բազկաթոռի մէջքը և երկար

Նայում էր պատուհանին, նշանակը փչացաւ. քամի վեր կացաւ. Մեծ սպիտակ ամպերը արագ անցնում էին երկնքի վրայով, բարակ կայմը օրօրւում էր հեռանում. կարմիր խաչ ունեցող երկար գրօշակը անդադար ծածանւում էր, ցած ընկնում և էլի ծածանւում. Հին ժամացույցի ճօճանակը թխթխկում էր ծանր, մի ինչ-որ տխուր ֆլշոցով. Նլենան փակեց աչքերը. Ամբողջ գիշերը նա վատ էր քնել. քիչ-քիչ նա քնի մէջ մտաւ:

Ստարտի երազ տեսաւ նա. Նրան թուաց, թէ նաւակով լողում է Յարիցինօի լճակի վրայ ինչ-որ անծանօթ մարդկանց հետ. Նրանք լուռ են, նստած են անշարժ, ոչ ոք չէ թիալաւրում. նաւակը ինքն ու ինքն է շարժւում. Նլենան սարսափ չէ զգում, այլ ձանձրոյթ. նա կը կամենար իմանալ, ինչ մարդիկ են դրանք և ինչո՞ւ ինքը դրանց հետ է. — Նա նայում է, իսկ լճակը լայնանում է, ամպերը կորչում են, — այլ ևս լճակ չէ դա, այլ անհանդիստ ծով. ահագին, բաց-կապույտ, լռիկ ալիքները փառահեղ կերպով օրօրում են նաւակը. ինչ-որ որոտացող, ահագին բան բարձրանում է յատակից. անյայտ ուղեկիցները յանկարծ տեղներից վեր են թռչում, կանչում են, շարժում են իրանց ձեռքերը... Նլենան ճանաչում է նրանց դէմքը. նրա հայրն էլ նրանց մէջ է. Բայց մի ինչ-որ սպիտակ փոթորիկ յարձակում է ալիքների վրայ. ամեն ինչ պտոյտ եկաւ, խառնուեց...

Նլենան նայում է իր չորս կողմը. առջուայ պէս ամեն ինչ սպիտակ է նրա շուրջը. Բայց սա ձիւն է, ձիւն, անվերջ ձիւն. Եւ Նլենան այլ ևս նաւակում չէ, նա սայլակում զնում է, ինչպէս զնում էր Մոսկուայից. Նա մնակ չէ. նրա կողքին նստած է մի փոքրիկ արարած, որ փաթաթւած է հնամաշ սալօսի մէջ. Նլենան նայում է նրան. դա Կատեան է, նրա խեղճ բարեկամուհին. Նլենան սարսափ է զգում. Միթէ Կատեան չէ մեռել. մտածում է նա:

— Կատեա, այս ուր ենք զնում քեզ հետ:

Կատեան չէ պատասխանում և փաթաթւում է իր սալօսի մէջ. նա ցրտից փայտանում է. Յուրտ է և Նլենայի համար. նա նայում է ճանապարհի երկարութեամբ. քաղաք է երևում հեռուում, ձիւնային փոշու միջով. Բարձր սպիտակ աշտարակներ արծաթեայ գլուխներով... Կատեա, Կատեա, սա Մոսկուան է. Ոչ, մտածում է Նլենան, սա Սօլովկիի վանքն է, այնտեղ շատ, շատ մանր ու անձուկ խուցեր կան, ինչպէս մեղուանոցի մէջ. այնտեղ հեղձուկ է, նեղուածք է, — այնտեղ փակուած է Դմիտրին. Ես պէտք է նրան ազատեմ... Յանկարծ ալիք, բերանաբաց անդունդ է փռւում նրա առջւ. Սայլակը ընկնում է, Կա-

տեան ծիծաղում է: Ելեննա, Ելեննա, լսում է մի ձայն անդունդից:

«Ելեննա», հնչեց պարզ կերպով նրա ականջների մէջ: Նա արագ բարձրացրեց գլուխը, յետ նայեց և ընդարմացաւ: Ինսարովը, սպիտակ, իրրև ձիւն, նրա երազի ձիւնը, բարձրացաւ մինչև բաղմոցի կէտը, և նայում էր Ելենային իր մեծ, փայլուն, սարսափելի աչքերով: Նրա մազերը ցրուել էին ճակատի վրայ, շրթունքները բացուել էին օտարոտի կերպով: Սարսափը, խառնուած մի տեսակ կարօտագին գութի հետ, արտայայտուել էր նրա յանկարծակի փոխուած դէմքի վրայ:

— Ելեննա, արտասանեց նա.— ես մեռնում եմ:

Ելեննան ճշգրտով ծունկ չռեց և սեղմուեց նրա կրծքին:

— Ամեն ինչ վերջացած է, կրկնեց Ինսարովը.— ես մեռնում եմ... Մնաս բարով, իմ խղճալի: Մնաս բարով, իմ հայրենիք...:

Եւ նա երեսն ի վայր ընկաւ բաղմոցի վրայ:

Ելեննան սենեակից դուրս վազեց, սկսեց օգնութիւն կանչել, ծառան վազեց բժշկի յետևից: Ելեննան ընկաւ Ինսարովի վրայ:

Այդ ակնթարթում դրան շէմքում երևաց մի լայնաթիկունք, արևառ դէմքով մարդ որ հագած ունէր հաստ վերարկու և ցածրիկ գլխարկ: Նա կանգ առաւ, տարակուսանքի մէջ էր:

— Բենդիչ—բացականչեց Ելեննան—դուք էք: Նայեցէք, ի սէր Աստուծոյ, նա վատ է: Ի՞նչ կզաւ նրան: Աստուած, Աստուած: Երէկ տանից դուրս եկաւ, այս բոպէին խօսում էր ինձ հետո:

Բենդիչը ոչինչ չասաց և միայն ճանապարհ տուեց: Նրա մօտով աշխոյժով քայլեց մի փոքրիկ մարդ, որ կեղծ մազեր և ակնոց ունէր. դա բժիշկն էր, որ ապրում էր նոյն հիւրանոցում: Նա մօտեցաւ Ինսարովին:

— Սինիօրա, ասաց նա մի քանի վայրկեանից յետոյ, պարոն օտարերկրացին վախճանուել է—il Signorefore stiere e morto—անեմբրիզմից, որ միացած էր թղթերի խանդարման հետ:

XXXV

Միւս օրը, նոյն այդ սենեակում, պատուհանի մօտ կանգնած էր Բենդիչը. նրա առջև, շալի մէջ փաթաթուած, նստել էր Ելեննան: Հարկան սենեակում դադաղի մէջ պառկած էր Ինսարովը: Ելեննայի դէմքը թէ վախեցած էր, թէ աշկենդան. ճա-

կատի վրայ, յօնքերի մէջ տեղում, երևացել էին երկու կնճիռներ. դրանք լարուած արտայայտութիւն էին տալիս նրա անշարժ աչքերին: Պատուհանում ընկած է Աննա Վասիլեֆնայի բացուած նամակը: Նա կանչում էր իր աղջկան Մոսկուա, գոնէ մի ամիս ժամանակով, գանգատւում էր իր մենակութեան վերայ, Նիկոլայ Արտեմովիչի վրայ, բարեւում էր Ինսարովին, տեղեկութիւն էր ուղում նրա առողջութեան մասին և խնդրում էր նրան բաց թողնել կնոջը:

Բենդիչը դալմատացի էր, ծովագնաց, որի հետ Ինսարովը ծանօթացել էր առաջին անգամ հայրենիք ճանապարհորդելիս և որին նա որոնեց ու գտաւ Վենեցիայում: Դա մի գաժան, կոպիտ, համարձակ մարդ էր, նուիրուած սլաւոնական գործին: Նա ասում էր թիւրքերին, ինչպէս և աւստրիացիներին:

— Գանի ժամանակ դուք պիտի մնաք Վենեցիայում, հարցրեց նրան Ելենան իտալերէն: Նրա ձայնն էլ անկենդան էր, ինչպէս և դէմքը:

— Մի օր, որպէս զի բեռը վերցնեմ և կասկած չը յարուցանեմ, իսկ յետոյ ուղիղ դէպի Զարաւ Ուրախ լուր չեմ տանի ես մեր հրկրացիներին: Նրան վաղուց էին սպասում. նրա վրայ յոյս ունէին:

— Նրա վրայ յոյս ունէին, մեքենաբար կրկնեց Ելենան:

— Ե՞րբ էք նրան թաղում, հարցրեց Բենդիչը:

Ելենան իսկոյն չը պատասխանեց. — էգուց:

— Էգուց, ես կը մնամ. ուղում եմ մի բռնոն հող գցել նրա գերեզմանի մէջ: Պէտք է ձեզ էլ օգնել: Բայց լաւ կը լինէր որ նա պառկէր սլաւոնական հողի մէջ:

Ելենան նայեց Բենդիչին:

— Նաւապետ, սասաց նա, — վերցրէք ինձ նրա հետ և տարէք մեզ ծովի միւս կողմը, հեռու այստեղից: Կարելի է:

Բենդիչը մտածեց. — Կարելի է. բայց գլխացաւանք շատ կայ: Պէտք կը լինի այստեղի անիծուած իշխանութեան հետ գործ ունենալ: Բայց ասեմք թէ մենք այդ բոլորը սաքրեցինք, թաղեցինք նրան այստեղ. ինչպէս ձեզ յետ բերեմ:

— Զեզ հարկաւոր չի լինի ինձ յետ բերել:

— Ի՞նչպէս, Ո՛ւր կը մնաք դուք:

— Ես ինձ համար տեղ կը գտնեմ. միայն վերցրէք մեզ, վերցրէք ինձ:

Բենդիչը քորեց իր վիզը. — Ինչպէս ուզում էք, բայց այդ բոլորը շատ գլխացաւանք է: Պնամ, փորձեմ. իսկ դուք սպասեցէք ինձ այստեղ երկու ժամից յետոյ:

Նա գնացւոյ Երևան անցաւ հարկան սենեակը, թիկն տուեց պատին և երկար կանգնած էր, քարացածի նման: Յետոյ նա ծռնել չընկ, բայց աղօթել չէր կարողանում: Նրա հոգու մէջ յանդիմանութիւններ չը կային. նա չէր յանդգնում հարցնել Աստուծուն, ինչու չը խնայեց, ինչու պատժեց մեղքից էլ աւել, եթէ կար մեղք: Մեղանից ամեն մէկը մեղաւոր է հէնց նրանով, որ ապրում է, և չը կայ այնպիսի մի մեծ մտածող, չը կայ մարդկութեան մի այնպիսի բարերար, որ իր տուած օգուտի ոյժով կարողանար յոյս ունենալ, թէ ապրելու իրաւունք ունի... Բայց Երևան աղօթել չէր կարողանում. նա քարացել էր:

Նոյն գիշերը մի լախ նաւակ հեռացաւ այն հիւրանոցից, ուր ապրում էին ինսարօվները: Նաւակում նստած էր Երևան Բենդիչի հետ և դուռն էր մի երկար արկղ, որ ծածկուած էր սև մահուդով: Մօտ մի ժամ նաւեցին նրանք և մօտեցան վերջապէս մի փոքրիկ երկկայմանի նաւին, որ խաբիսի էր գըցել նաւահանգստի մուտքի մօտ: Երևան և Բենդիչը նաւը բարձրացան. նաւակները բերին արկղը: Կէս գիշերից բարձրացաւ փոթորիկ, բայց վաղ առաւօտեան նաւը արդէն հեռացել էր Կիթօից: Օրուայ ընթացքում փոթորիկը սարսափելի ոյժի հասաւ և փորձուած ծովագնացները «Լիթօի» զբաղենակներում շարժում էին իրանց գլուխները և լաւ բան չէին սպասում: Աղբիւսական ծովը վենեցիայի, Տրիեստի և դալմատական ափի մէջ չափազանց վտանգաւոր է:

Երեւայի վենեցիայից ճանապարհուելուց մօտ երեք շաբաթ յետոյ Աննա Վասիլեւիչեան Մոսկուայում ստացաւ հետևեալ նամակը.

«Իմ սիրելի ծնողներ, ես ընդմիջտ հրաժեշտ եմ տալիս ձեզ: Դուք այլ ևս չէք տեսնի ինձ: Երէկ վախճանուեց Դմիտրին: Ամեն ինչ վերջացաւ ինձ համար: Այսօր ես նրա մարմնի հետ ճանապարհուում եմ Զարա: Կը թաղեմ նրան, իսկ յետոյ ինչ կը լինի ինձ հետ, չը գիտեմ: Գայց այլ ևս մի ուրիշ հայրենիք չը կայ ինձ համար, բացի Դ-ի հայրենիքից: Այնտեղ պատրաստուում է ապստամբութիւն, պատերազմ. ես գթութեան քոյր կը դառնամ, հիւանդների և վիրաւորուածների յետևից կը գնամ: Ձը գիտեմ ինչ կը լինի ինձ հետ, բայց Դ-ի մահից յետոյ ես հաւատարիմ կը մնամ նրա յիշատակին, նրա ամբողջ կեանքի գործին: Ես սովորել եմ բօլշարական և սերբիական լեզուները: Երևի, ես այս բոլորը չեմ տանի,—աւելի լաւ: Ես հասել եմ անդունդի ծայրին և պիտի ընկնեմ: Զուր չէր ճակատադիրը միացրել մեզ, ով գիտէ, գուցէ ես սպանեցի նրան:

այժմ նրա հերթն է ինձ իր յետիւյ քաշելու: Ես երջանկութիւն էի որոնում—և կը գտնեմ՝ երեւի մահ: Երեւի այսպէս էր հարկաւոր, երեւի մեղք կար... Բայց մահը ամեն ինչ ծածկում է և հաշտեցնում,—այնպէս չէ: Ներեցէք ինձ, որ ձեզ վիշտ եմ պատճառել: Իմ կամքով չարի ես այդ բանը: Իսկ վերադառնալ Ռուսաստան—ինչու: Ի՞նչ անեմ Ռուսաստանում:

«Ընդունեցէք իմ վերջին համոյրները և օրհնութիւնները և մի դատապարտէք ինձ»:

Ե.

Այն ժամանակից անցել է արդէն մօտ հինգ տարի, և ուրիշ մի լուր այլ ևս չէ եկել Ելենայի մասին: Անպտուղ մնացին բոլոր նամակները, հարց ու փորձերը, իզուր ինքը, Նիկոլայ Արտեմիւիչը, հաշտութիւն կնքելուց յետոյ, զնայ Վենեցիա, Զարա. Վենեցիայում նա իմացաւ այն, ինչ արդէն յայտնի է ընթերցողին, իսկ Զարայում ոչ ոք չը կարողացաւ դրական տեղեկութիւններ տալ Բենդիչի և լայն նաւի մասին, որ նա էր վարձել: Մութ լուրեր էին պտտում, որպէս թէ մի քանի տարի առաջ ծովը, սաստիկ փոթորիկից յետոյ, ափ նետեց մի դադաղ, որի մէջ գտան մի տղամարդի դիակ... Ուրիշ, աւելի արժանահաւատ տեղեկութիւններին նայելով, այդ դադաղը ծովը չէր դուրս նետել, այլ բերել և ափի մօտ թաղել էր մի օտարերկրացի տիկին, որ եկել էր Վենեցիայից, մի քանիսները աւելացնում էին, թէ այդ տիկնոջը յետոյ տեսել են Հերցիգօվի նաւում այն զօրքի հետ, որ հաւաքւում էր այն ժամանակ, նկարագրում էին նոյն իսկ նրա հագուստը, որ սև էր ոտքից մինչև գլուխ: Ինչ էլ լինէր, Ելենայի հետքը կորաւ ընդմիշտ և անդառնալի կերպով, և ոչ ոք չը գիտէ, դեռ կենդանի է նա, թաղնուած է մի տեղ, թէ արդէն վերջացել է կեանքի փոքրիկ խաղը, վերջացել է այդ կեանքի թեթև խմորումը և հասել է մահուան հերթը: Պատահում է, որ մարդը, զարթնելով, մի ակամայ երկիւղով հարցնում է իրան, մի՞թէ ես արդէն երեսուն... քառասուն... յիսուն տարեկան եմ: Ի՞նչպէս էր որ կեանքը, այսպէս շուտ անցաւ: Ի՞նչպէս էր որ մահը այդքան մօտ եկաւ: Մահը մի ձկնորսի նման է, որ գցել է ձուկը իր ցանցի մէջ և մի առժամանակ պահում է նրան ջրի մէջ. ձուկը դեռ լողում է, բայց ցանցը նրա վրայ է և ձկնորսը դուրս կը քաշէ նրան, երբ կը կամենայ:

Ի՞նչ եղան մեր պատմութեան միւս անձինքը:

Աննա Վասիլևիլան դեռ կենդանի է. իրան զիպած հարուածից յետոյ նա շատ պառաւել է, գանգատուում է քիչ, բայց աւելի շատ դիտում է: Նիկոլայ Արտեմեփիչը նոյնպէս ձերացել է և սպիտակել, և բաժանուել է Աւգուստինա Խրիստիանովնայից... Նա այժմ հայհոյում է ամեն օտարերկրեայ բան: Նրա տնտեսուհին, երեսուն տարեկան մի գեղեցիկ կին, ուսաներից, մետաքսեայ շորեր է հագնում և կրում է ոսկէ մատանիներ ու ականջի օղեր: Կուրնատօլակին, իբրեւ տեմպերամենտի տէր և իբրեւ եռանդոտ սեաներ մարդ, որ սիրում է սիրունատես չիկաներ կանանց, ամուսնացել է Զօհայի հետ. սա բոլորովին հպատակուել է նրան և նոյն իսկ դադարել է գերմաներէն մտածելուց: Բերսենսիլը գտնուում է Հէյդլբերգում. նա այցելեց Բերլինը, Պարիզը, և վեր ժամանակ չէ անցնում. նրանից մի օրինաւոր պրօֆէսոր դուրս կը գայ: Գիտնական հասարակութիւնը ուշադրութիւն դարձրեց նրա երկու յօդուածների վրայ. Հին-գերմանական իրաւունքի մի բանի առանձնայատկութիւնների մասին դասաւանդական պատմների գործում, և—Քաղաքային սկզբունքի նշանակութեան մասին քաղաքակրթութեան հարցի մեջ: Ափսոս միայն, որ երկու յօդուածներն էլ գրուած են փոքր ինչ ծանր լեզուով և խճողուած են օտար բառերով: Շուքինը Հռոմում է. նա ամբողջապէս նուիրուել է իր արուեստին և համարում է մէկը ամենանշանաւոր և շատ բան խոստացող երիտասարդ քանդակագործներից: Խիստ քննող տուրիստները գտնում են, որ նա բաւականաչափ չէ ուսումնասիրել հներին, որ նա «ոճ» չունի և համարում են նրան ֆրանսիական դպրոցին հետևող: Անգլիացիներից և ամերիկացիներից նա անթիւ պատուէրներ ունի: Վերջին ժամանակ շատ աղմուկ հանեց նրա մի վակխանուհին, ոտու կոմս Բօբօշկին, մի յայտնի հարուստ, ուզում էր գնել նրանց 1000 սկուտիով, բայց աւելի լաւ համարեց 3000 տալ մի ուրիշ քանդակագործի, որ ֆրանսիացի էր pur sang այն խմբական արձանի համար, որ ներկայացնում էր ճերտասարդ գեղջկուհին, որ մեռնում է սէրից զարնան Ոգու կրծքին: Շուքինը մի մի անգամ նամակ է գրում Ուլար Իվանովիչին, որ միայն ըզլորովին չէ փոխուել ոչ մի բանի մէջ: Յիշում էք, գրում էր Շուքինը մի քանի ժամանակ առաջ, թէ ինչ ասացիք ինձ այն գիշերը, երբ յայտնի դարձաւ խնդճ Ելենայի ամուսնութիւնը, երբ ես նստած էի ձեր մահճակալի վրայ և խօսում էի ձեզ հետ: Յիշում էք, ես հարցնում էի ձեզ այն ժամանակ, կը լինէն մարդիկ մեղանում, և դուք պատասխանեցիք.

«Կը լինենա՞ւ Օ՛ր, սևահողի ոյժ: Եւ ահա այժմ ես այստեղից, իմ
«գեղեցիկ հեռաւորութիւնից, հարցնում եմ ձեզ նորից.—հը,
լինչ է, Ուվար Իվանովիչ, կը լինենա՞ւ:

Ուվար Իվանովիչը խաղաղեց մատները և դէպի հեռուն
ուղղեց իր խորհրդաւոր հայեացքը...

Վ Ե Ր Ջ